

ՄԵՐԻ 2020ՄԲՉ

ՄՐԳԵՐԻ ԵՎ ԲԱՆՋԱՐԵՂԵՆԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՉՈՐԱՆՈՑՆԵՐ

Տեխնիկական անձնագիր և շահագործման պայմանները



ՀՀ, Ք. ՀՐԱԶԴԻԱՆ 2020Թ.

<<ՄԵՐԻ 2020ՄԲԶ--->> մրգեր բանջարեղեն չորացնելու էլեկտրական չորանոցների հիմնական տեխնիկական պարամետրերը

1. Հիմնական մոդելները 5-ն են, որ զետեղված են աղյուսակում,

	Անվանումը	<<ՄԵՐԻ 2020ՄԲԶ--->> էլեկտրական չորանոցների մոդելը				
		ՄԲԶ30	ՄԲԶ60	ՄԲԶ100	ՄԲԶ200	ՄԲԶ360
1	Արտաքին չափսերը /սմ/	56*65*130	56*65*215	85*79*220	85*127*220	118*127*236
2	Չորանոցի քաշը /կգ/	65	95	160	210	280
3	Չորացվող մրգի քաշը /կգ/ ծիրանի դեպքում/	30-36	60-72	100-118	200-236	360-390
4	Չորացման մակերեսը /քառ.մ/	2,3	4,6	5,76	11,5	18,8
	Ցանցով սկուտեղի քանակը /հատ/	10	20	18	36	40
	Սկուտեղի չափսը /սմ/	0,43*0,55	0,43*0,55	0,49*0,67	0,49*0,67	0,49*0,96
5	Մնման լարումը /Վ/	220, 50Հրց	220, 50Հրց	220, 50Հրց	3*380, 50Հրց	3*380, 50Հրց
6	Ծախսվող հզորությունը /կՎտ/	1,2	2,4	3,6	6,0	12,0
7	Մղվող օդի ծավալը /լիտր.մ/ժ./	400	400	800	1600	2400
8	Խոնավության դիտում	-	-	+	+	+
9	Արևային համակարգի ռեժիմ	-	-	+	+	+
10	Օդամղիչի մուտքային ջերմաստիճանի դիտում	-	-	+	+	+
11	Մանրածախ գինը ` ՀՀԴ	670000	1130000	1650000	2650000	4100000

2. Պատվիրատուի առաջարկով կարող է նախագծել և արտադրել իրեն նախընտրելի տարբերակը, եթե քանակը կլինի 5 կոմպլեկտից ավելին,


3. Չորանոցները կահավորված են միկրոպրոցեսորային կարգավորիչով, որը ապահովում է 33 անկախ ծրագրավորված հարթակներ, որը ամեն մի չորացվող տեսակի համար ունի կոնկրետ չորացման ծրագիր: Չորացման արագ մեկնարկի համար անհրաժեշտ է հավաքել ղեկավարման վահանակի ձախ կողմում պատկերված մեկնարկային կոդը, իսկ տվյալ հարթակում պարամետրերի փոփոխման համար անհրաժեշտ է մուտք գործել տվյալ հարթակի տեխնիկական ցանկ՝ հավաքելով տվյալ մրգի կամ բանջարեղենի համար նախատեսված արագ մեկնարկի կոդի *-ից հետո 0-ի փոխարեն ընտրել 9 թիվը, օրինակ՝ ծիրան չորացնելու արագ մեկնարկի կոդն է *001#, իսկ ծիրան մրգի տեխնիկական ցանկ մտնելու համար՝

*901#: Կող հավաքելու համար անհրաժեշտ է ստեղծագործարի վրա սեղմել * կոճակը, Էկրանին կբացվի (ENTER CODE)



ՄԵԿՆԱՐԿ	
*001# ԾԻՐԱՆ	*002# ՄԱԼՈՐ
*003# ԴԵՂԶ	*004# ԽՆԶՈՐ
*005# ՏԱՆԶ	*006# ԹՈՒԶ
*007# ԱՐ.ԽՆԶՈՐ	*008# ԿԵՌԱՍ
*009# ԲԱԼ	*010# ԽԱՂՈՂ
*011# ՍԵԽ	*012# ԵԼԱԿ
*013# Ս.ՀԱՂԱՐԶ	*014# ՄՈՐԻ
*015# ՄՈՇ	*016# ԼՈՂԻԿ
*017# ՄՄԲՈՒԿ	*018# ԼՈՐԻ
*019# ՈՒՐՑ	*020# ԾԻՏՐՈՆ
*021# ՌԵՀԱՆ	*022# ՆԱՆԱ
*023# ԱՅԼ01	*024# ԱՅԼ02
*025# ԱՅԼ03	*026# ԱՅԼ04
*027# ԱՅԼ05	*028# ԱՅԼ06
*029# ԱՅԼ07	*030# ԱՅԼ08
*031# ԱՅԼ09	*032# ԱՅԼ10
*033# ԱՅԼ11	
ՑԱՆԿ ՄՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԵՌԱՆԻՇ ԹՎԻ ՍԿԶԲԻ 0-Ի ՓՈԽԱՐԵՆ ՀԱՎԱՔԵԼ 9	

պատուհանը, որից հետո հավաքել անհրաժեշտ կոդի եռանիշ թիվը, և սեղմելով # կոճակը մուտք կգործեք համապատասխան դաշտը, օրինակ՝ ցանկանում եք մուտք գործել /ծիրան/ մրգի ցանկի արագ փոփոխման դաշտ, անհրաժեշտ է հավաքել *901, երբ էկրանին կհայտնվի 901 եռանիշը՝ սեղմեք # կոճակը, մուտք կգործեք (APRICOT 001) ծիրան մրգի ցանկ, որտեղ կարող եք կատարել չորացման ռեժիմի պարամետրերի փոփոխություններ: A և B կոճակներով կարող եք էկրանի ցուցիչով



ընտրել նախընտրելի տողը, C կոճակով ջնջել հին թիվը, գրել նորը և D կոճակի մեկ սեղմումով հաստատել: Ցանկից դուրս գալու համար D կոճակը սեղմել երկու անգամ: Ցանկ դաշտերում զետեղված են չորացման պրոցեսին մասնակցող հետևյալ պարամետրերը՝

(Dry time, h)-----չորացման ընթացքի ժամանակը՝ 4-48 ժամ

(Start_Temp, C)---չորացման մեկնարկի նախնական ջերմաստիճանը մինչև 60րոպե

(Stop_Temp, C)---չորացման ավարտի վերջին 10 րոպեի ընթացքում

(Main_Temp, C)---չորացման հիմնական ջերմաստիճանը

(Out_time, s)-----չորացման ընթացքում օդի արտաքին շրջանառության ժամանակը

(In_timw, m)----- չորացման ընթացքում օդի ներքին շրջանառության ժամանակը
 (T_sun, C)-----արևից տաքացած դրսի օդի ջերմաստիճանը:

3-1. Ջերմային կարգավորման տիրույթը չորանոցներում՝ 40-90 աստիճան ըստ Ցելսիուսի, որը աշխատանքային ցիկլի ընթացքում ունի զարգացման 3 տիրույթ՝ նախնական, վերջնական և հիմնական ջերմաստիճաններ, ամեն մի չորացման ռեժիմ ունի իր կարգավորումները,

3-2. Ջերմաստիճանի շեղումը սահմանված է +-1 աստիճան,

3-3. Ջերմային էներգիան ապահովում են էլեկտրական տաքացուցիչները, կամ կարող է կիրառել արևի կողմից տաքացված օդը՝ միայն 100 կգ և ավելի տարողությամբ չորանոցներում, տաքացնող էլեմենտների քանակը՝ 1-6 հատ, կախված հզորությունից,

3-4. 100 կգ և ավելի տարողությամբ չորանոցները կահավորված են ներքին չափման խոնավաչափով,

3-5. Չորացման ժամանակը՝ 4-48 ժամ, կահավորված է ժամանակի հետհաշվարկային հաշվիչով, հարկադրական դադարի և դուռը բացվելու դեպքերում ժամանակի հետ հաշվարկը կանգ է առնում,

3-6. 100 կգ և ավելի տարողությամբ չորանոցները կահավորված են հատուկ ծրագրային, ներքին և արտաքին շրջանառության ռեժիմներով,

3-7. Չորանոցի էկրանին մեկնարկից առաջ արտաբերվելու է ;



Է1. վերին տողին ձախից՝ տաքացուցիչ խցիկի էլքային ջերմաստիճանը (Tsu.թ), չորանոցի ներսի ջերմաստիճանը (T_{ներս}), դրսի օդի ջերմաստիճանը (T_{դրս}), օդամղիչի մուտքային ջերմաստիճանը (T_{մուտք}), խոնավաչափի էլքային ջերմաստիճանը (T_{ել.թ}), չորանոցում խոնավության տոկոսային իրական արժեքը (H_{ել.թ}),

Է2. վերևից ներքևի տողին ձախից՝ տաքացնող էլեմենտների հզորությունների ծախսը աշխատանքի ընթացքում (HT 2 2 1), կամ (HT - - -), որտեղ թվերը արտացոլում են տաքացուցիչների ռեալ հզորությունները, իսկ գծիկները՝ որ տաքացուցիչները անջատված են, իսկ եթե թարթում են, ապա տվյալ տաքացուցիչները խզված են: (FN) ցույց է տալիս օդամղիչի աշխատանքի վիճակը, իսկ եթե թարթում է՝ ապա վթարային վիճակում է օդամղիչը: (TWV-IN) ցույց է տալիս եռակողմ փականի դիրքը դեպի ներքին օդի շրջանառություն, (TWV-OUT) ցույց է տալիս՝ արտաքին շրջանառության մասին:

Է3. վերևից ներքևի երրորդ տողում մինչև մեկնարկը արտաբերում է՝ (MH:-000....) չորանոցի աշխատած ընդհանուր ժամանակը մինչև այդ պահը /9999999 ժամ/, և (wrk: 00..) չորանոցի կատարած ցիկլերի ընդհանուր քանակը մինչև այդ պահը /9999 ցիկլ/: Իսկ մեկնարկից հետո, տողը արտաբերում է հետհաշվարկային ժամանակը մինչև չորացման ավարտը (DH-HH:MM), և չորացվող տեսակի անվանումը, օրինակ՝ APRICOT:

Է4. ներքևի տողին արտաբերում է՝ ռեալ ամսաթիվը (ՕԴ ԱՄԻՍ ՏԱԴԻ), ժամանակը (ԺԱՍ):

3.8. Ղեկավարման համակարգի հինական հրահանգներն են՝

*999# մուտք չորանոցի գլխավոր ցանկ, որտեղ մուտքագրվում և փոփոխվում են հարթակների հիմնական պարամետրերը,

*998# մուտք չորանոցի էլեկտրոնային գրանցումների մատյան, որտեղ ավտոմատ գրանցվում են չորանոցի գործունեության և վթարային ռեժիմների պահերը, ամբողջ աշխատանքի ընթացքում՝ 2400 էջ:

*997# մուտք ընդհանուր մեկնարկային ցանկ:

*996# չորանոցի աշխատանքի ժամանակավոր դադարի ռեժիմ:

*995# չորանոցի աշխատանքային ցիկլի հարկադրական ավարտ:

3.9. Չրանոցի ղեկավարման վահանակի աջ կողմում լուսադիոդային ինդիկատորները վերևից ներքև, տեղեկացնում են՝

/ՓԱԿԱՆ/ եռակողմ փականի վիճակի փոփոխություն,

/ԴՈՒՌԸ ԲԱՑ Է/ դռան բաց լինելը, որը արգելում է աշխատանքի մեկնարկը, իսկ ընթացքում բացվելիս չորանոցը անցնում է դադարի ռեժիմ,

/ՏԱՔԱՑՈՒՑԻՉ 3/, /ՏԱՔԱՑՈՒՑԻՉ 2/, /ՏԱՔԱՑՈՒՑԻՉ 1/ էլեկտրական տաքացնող էլեմենտների միացման վիճակները,

/ՕԴԱՄՂԻՉ/ օդամղիչը աշխատում է:

ԿԱՌՈՒՑՎԱՑՔԸ

Չրանոցները բաղկացած են հետևյալ հանգուցներից՝

1. չորացման խուց, որի մեջ դասվարվում են իրարից 80մմ հեռավորությամբ ցանցային սկուտեղները, ըստ պատվիրատուի պահանջի, սկուտեղները կարող են պատրաստվել նուրբ ցանցային տարբերակով, այնպես էլ չժանգոտվող պերֆորացված թիթեղյա սկուտեղներով,
2. բաշխիչ օդատար հանգույցից, որը իրականացնում է խցի տաք օդի ներքին և արտաքին շրջանառությունը, որ հանդիսանում է որակով չարացման գործոններից մեկը,
3. օդամղիչ և եռակողմ փականի հանգույցը, որը կապում է խուցը տաքացնող կոլեկտորի, և մուտք-ելք ճկախողովակների հետ,
4. տաքացնող խցիկ-կոլեկտորը, որ հանդիսանում է օդի անհրաժեշտ ջերմաստիճանը կարգավորող հանգույցը,
5. էլեկտրական ուժային բլոկը, որը ապահովում է էլեկտրական հանգույցների գլխավոր սնուցողը,
6. միկրոպրոցեսորային ղեկավարման բլոկը, որ ավտոմատ ղեկավարում է չորանոցի կանոնավոր աշխատանքը, կատարում է չրանոցի հետ կապված վթարային ռեժիմների ահազանգում և գրանցում էլեկտրոնային գրանցման մատյանում:



ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. Մինչև չորանոցի տեղադրելը, անհրաժեշտ է, ընտրել հարթ և ամուր հատակ ունեցող տարածք, որը առնվազն 80 սմ հեռավորության վրա լինի հարակից պատերից և այլ սարքավորումներից, առնվազը 60 սմ ցածր առաստաղից,
2. Թարմ օդի մուտքը դեպի չորանոց կառուցել 100սմ տրամագծով ճկախողովակով, որ միացված լինի շինության կտուրի տակ տեղադրված օդային ֆիլտրից,

3. շատ կարևոր է, որ կտուրը ունենա մուգ գույնի թիթեղյա ծածկ, և հնարավորինս կտուրի ներսը դրսի հետ լինի հերմետիկ փակված, միայն դրսից օդի հոսքը կտուրի տակ ապահովել ֆիլտր-ցանցի միջոցով,
4. չորանոցի ներսի խոնավ օդը հեռացնել 75մմ տրամագծով ճկախողովակի միջոցով՝ չորանոցի հետնապատից,
5. չորանոցի էլեկտրական բլոկի մետաղական մասերը հողանցել նշված կոնտակտից,
6. հոսանքի լարի միացումը կատարել առաստաղից դեպի չորանոցի վրա տեղադրված հոսանքի ավտոմատ անջատիչը:

ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

- 1.Նախապատրաստական աշխատանքները ավարտելուց հետո, չորանոցը տեղադրել այնպես, որ սկուտեղները դասավորվեն հորիզոնական դիրքով,
2. տեղադրել հանգույցերը, ամրացնել ճկախողովակները, միացնել չորանոցի հողանցման հանգույցը հողանցման կոնտուրին, միացնել չորանոցը էլեկտրական համապատասխան ցանցին,
3. տեղադրման և էլեկտրական մոնտաժային աշխատանքները պետք է կատարի համապատասխան վկայական ունեցող պրոֆեսիանալ մասնագետը, խուսափելու համար դժբախտ պատահարներից:

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԵՐԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Չորանոցները նախատեսված են մրգեր, բանջարեղեն, խոտաբույսեր, մսամթերք, հաց չորացնելու համար: Չորանոցները կարելի է օգտագործել սննդային արդյունաբերության մեջ ամենուր, որտեղ պետք է տաք օդի հոսք: «Մերի» ձեռնարկության չորանոցների տարողության սպեկտրի մեծության և դիզայնին յուրահատուկ մոտեցման շնորհիվ՝ գույնը և մատերիալը ընտրում է հաճախորդը, այն կարող է օգտագործվել և՛ սեփական տներում, և՛ գործարաններում:

Չորանոցի մասերը, բացի կմախքից, պատրաստված են մետաղից՝ չժանգոտվող թիթեղ, ալյումին, չժանգոտվող պողպատ: Կմախքը մշակված փայտից է, այն չի դեֆորմացվում և պաշտպանված է վնասատու միջատներից և ունի արտաքին միջավայրի հետ ջերմամեկուսացում: Բոլոր մետաղները, որոնց օգտագործվում են չորանոցի մեջ անվտանգ են աշխատանքային ջերմաստիճաններում և չեն կարող փչացնել չորացվող ապրանքի համը և թունավորել այն:

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Տեղադրման և մոնտաժային աշխատանքները ավարտելուց հետո պետք է անցնել կարգավորման և գործարկման աշխատանքներին՝


1. կարգավորման և գործարկման աշխատանքները պետք է իրականացնի միայն պրոֆեսիոնալ մասնագետը, որը կարող է լինել արտադրողի համապատասխան մասնագետը, կամ արտադրողի կողմից լիազորվածը,
2. անհրաժեշտ է ստուգել բոլոր հանգույցների անթերի կատարումը, որից հետո միացնել հոսանքի ավտոմատը ցանցին,
3. պետք է լուսավորվի էկրանը և արտաբերի էկրանին նախնական գրառումները,
4. մուտք գործել գլխավոր ցանկ, կարգավորել անհրաժեշտ ֆունկցիաները, տարեթիվը, ժամանակը,
5. կարգավորելուց հետո կատարել փորձնական թողարկում 4 ժամ ընդհանուր ցիկլով, առավելագույնը 50 աստիճան ցելսիուս. պայմաններում, աշխատանքի ընթացքում բացել դուռը, ստուգելու համար ազդանշանային գրանցումների ընթացքը, որից հետո կատարել էլեկտրական հզորությունների չափում.
6. եթե փորձարկման ընթացքում թերություններ ի հայտ չգան, կարելի է անցնել գործարկման, համապատասխան տեխնոլոգիայով բեռնել չորանոցը և հետևել չորացման ընթացքին:

Անվտանգության կանոններ:

1. Արգելվում է աշխատանքի ժամանակ ձեռք տալ աշխատող մասերին:



2. Արգելվում է ցանցին միացած ժամանակ ձեռք տալ չորանոցի էլեկտրոնիկային և հոսանքատար հանգույցների, լարերին:



3. Արգելվում է բարձր ջերմաստիճաններում աշխատանքի ժամանակ բացել դուռը և ձեռք տալ մետաղյա մասերին, դրանց ջերմաստիճանը կարող է լինել շատ բարձր, որի պատճառով կարելի է ստանալ այրվածք:

4. Արգելվում է փակ չորանոցի օդը շնչել: Տաք և խոնավությունից գուրկ օդը կարող է առաջացնել այրվածքներ շնչառական ուղիների և օրգաններում:

5. Չորանոցում քիմիկատների և քիմիկատներով մշակված մթերքը չորացնելուց հետո, այլ մթերքներ, որոնց հետ տվյալ քիմիկատները անհամատեղելի են, չեն կարող չորացվել, քանի որ դա կարող է առաջացնել թունավորումներ:

6. Քիմիկատները չորացման ժամանակ կարող են հավաքվել չորանոցի խողովակների և օդամղիչ պոմպի մեջ:

7. Տեխնիկական փոփոխություններ կատարելուց առաջ պետք է տեղյակ պահել արտադրող ընկերությանը, հետագայում խնդիրներից խուսափելու նպատակով:

ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

1. Արտադրողը երաշխավորում է իր արտադրանքի անխափան աշխատանքի համար վաճառքի օրվանից 12 ամիսների ընթացքում և պարտավորվում է՝ անսարքություն առաջանալու դեպքում 24 ժամվա ընթացքում վերականգնել անսարքությունը, եթե արտադրողի մեխքով է:
2. Արտադրողը պարտավորվում է անվճար խորհրդատվություն տրամադրել գնորդների ներկայացուցիչներին:
3. Տեղափոխման ծախսերը կատարում է գնորդը:
4. Գործարկման և կարգավորման աշխատանքները իրականացնում է արտադրողը:

5. Արտադրողի հասցեն և բանկային վերապայմանները

ՀՀ, Ք. Հրազդան, Երիտասարդական 104

ԱԶ <<Վարուժան Մկրտչյան>>

ՀՎՀՀ 40510973

Հ/Հ 2412700952800՝ Յունիբանկ Հրազդան մ/ճ

091 426407, 094 426407,

varujterm@mail.ru www.electronica-vm.am

Տնօրեն՝ Վարուժան Մկրտչյան _____

Գնորդ _____

“ _____ ” _____ 202 _____